



### 213. ՀԻՄԱՐ ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՐՁԸ

Մի գյուղի մոտ, ժայռի տակ, մի ճգնելու քարայր է լինում։ Մի օր գյուղացիները նկատում են, որ մի արջ եկել է մտել այդ քարայրի մեջ և դուրս չի գալիս։ Գյուղացիները, որովհետև ներքեմից գնալու ոչ մի տեղ չի լինում, վերևից սկսում են հայ-Հոռովանել՝ արջին քարայրից դուրս անելու համար։ Ինչ անում են, ինչ շեն անում, հեար չի լինում արջին հանելու Գյուղացիները մտածում ին, մտածում և գալիս այն եզրակացության, որ արջը հասկացել է, որ այդ քարայրը ճգնելու տեղ է, եկել է ճգնելու Գնում են տերտերին թերում և ասում։ —Տեր հայր սրբահոգի արջը ուղում է ճգնի, արի թեզ թոկով կախ տանք, գնա քարայրի մոտ, արջին օրհնիր, որ ճգնավոր լինի։ Տերտերը համաձայնվում է այն պայմանով, որ եթե ներքեմից միրուքը շարժի, խսկույն հանեն։

Ամուր թոկով տերտերին զլուխնիվար կախում են ժայռից։ Երբ տերտերը հավասարվում է քարայրին, արջին տեսնելով, ըսկըսում է գեղի արջը խաչ հանել ու աղոթքներ մրմնչալ։ Արջը զայրանում է և տերտերի միրուքից բռնում, տերտերը թոկը շարժում է, իմաց տալով, որ ձգեցեք վերևից մարդիկ քաշում են, ներքեմից արջն է տերտերի գլուխը խտառում, այնքան ձգում, որ տերտերի գլուխը պոկվում է ու անգլուխ հանում են վերև։

—Ո՞ւր է տեր հոր զլուխը, —բացականշում են մարդիկ, դեսդեն ընկնում, բայց շեն գտնում։

—Տղերք, երբ տերտերին կախեցինք, զլուխը վրե՞ն էր, թե ոչ, —հարցնում է ժամհարը։

—Զենք իմանում՝ վրե՞ն էր, թե ոչ, —պատասխանում են հավաքվածները։

Ճարը կտրած, մարդիկ մեկին ուղարկում են տերտերի տունը,  
իրիցկնոշից իմանալու նրա ուղարկած մարդը իրիցկնկանից հարց-  
նումէ.—Իրիցկին, այսօր տեր հոր զլովաց վըե՞ն է եղել, թե ոչ,  
իրիցկինը պատասխանում է.—Այդքանը միտու չի գալիս, միայն  
այն եմ հիշում, որ առավոտը տեր հայրը աղոթք անելիս միրուքը  
տմբամբում էր:

